World Vision
ARMENIA

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ՝ 2017 -2018 ՖՈՒԼԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Վորլդ Վիժն Հայաստան

Օգոստոս 2019

World Vision ARMENIA

Բովանդակություն

Պետության համառոտագիրը 2
Վորլդ Վիժն-ի Ավարտական Մոտեցումը Հայաստանում 3
Հիմնական արդյունքներ 8
Ծախսային արդյունավետություն (Ներդրումներ) 8
Եկամուտների աճ 11
Ավարտած ընտանիքներ 14
Իրավիճակային ուսումնասիրություններ 17
Հաջողության պատմություն 23
Եզրակացություններ և առաջարկություններ 25

Պետության համառոտագիրը

Հայաստանը հետսովետական, մայրցամաքային պետություն է Հարավկովկասյան տարածաշրջանում; այն սահմանակցում է հյուսիսում՝ Վրաստանի, արևմուտքում և հարավում՝ Թուրքիայի, արևելքում և հարավ-արևմուտքում՝ Ադրբեջանի, և հարավում՝ Իրանի հետ: Պետությունն ունի լարված հարաբերությունների պատմություն Թուրքիայի և Ադրբեջանի հետ; հատկապես վերջինի հետ վաղ ինքնուրույնությունից ի վեր շարունակվում է պարբերաբար հրաձգություններով խախտվող հրադադարը՝ Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածաշրջանի շուրջ: 2016 թ. ապրիլին հակամարտությունը լարվեց հերթական անգամ՝ հրադադարի որոշակի ժամանակահատվածից հետո: Աշխարհաքաղաքական անկայունության իրավիճակը, ինչպես նաև հարևան չորս պետություններից երկուսի հետ սահմանների շրջափակված լինելու փաստը բացասաբար են անդրադառնում պետության սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունների վրա:

2016-ին Հայաստանի բնակչությունը կազմում էր 2 998 600 մարդ: Աղքատության ցուցանիշը 2016-ին կազմում էր 29.4% - ինչը 0.4%-ով ցածր էր 2015 թ. ՀՀ Վիճակագրական Կոմիտեի՝ աղքատության և սոցիալական հիմնախնդիրների հրապարակած հաշվետվության ցուցանիշներից:[1] Պետության տնտեսությունն աճել է միայն 0.2%-ով, և նման աճն անբավարար է աղքատության կրճատման համար: 2016 թ. աղքատության ցուցանիշը, վերջին յոթ հետճգնաժամային տարիների այլ ցուցանիշներին համահունչ՝ գերազանցել է 2008 թ. աղքատության ցուցանիշը 1.8%-ով (27.6%)[2]:

Վիճակագրական հաշվետվության համաձայն՝ աղքատության սահմանագծին 2016-ին ապրողները կազմում էին բնակչության 9.8%-ը, ինչը 2008 թ-ին կազմել էր 12.6%, իսկ ծայրահեղ աղքատության մեջ ապրողների ցուցանիշը տվյալ տարիներին համապատասխան կազմում է 1.8% և 1.6%: Դա նշանակում է, որ Հայաստանում աղքատության մեջ ապրում են 880 000 մարդ, առավել աղքատ բնակիչների թիվը կազմում է 295 000, ընդ որում 54 000 մարդ ապրում են ծայրահեղ աղքատության մեջ: Որպես արդյունք՝ պետության բնակչության 33.5%-ը ապրում է խորը աղքատության մեջ, և 6.1%-ը՝ ծայրահեղ աղքատության մեջ: Քաղաքային և գյուղական տարածաշրջանների աղքատության ցուցանիշների միջև տարբերությունն էական չէ՝ 2016 թ-ին քաղաքներում աղքատությունը կազմել է 28.8%, իսկ գյուղական վայրերում՝ 30.4%: Սակայն աղքատության ցուցանիշի տարբերությունը մեծ է Երևանի (24%) և այլ քաղաքների (33.2%) միջև: Ամենացածր ցուցանիշը գրանցվում է Արագածոտն մարզում՝ 15.7%, մինչդեռ Շիրակում է գրանցվել աղքատության ամենաբարձր ցուցանիշը՝ 45.5%:

Ամենամսյա աղքատության շեմը Հայաստանում մեկ անձի հաշվով 2016 թ-ին կազմել է 40867 դրամ, կամ 85.1 ԱՄՆ դոլար, մինչդեռ 2008 թ-ին այդ ցուցանիշը կազմել է 29 903 դրամ, իսկ առավել աղքատության ցուցանիշը կազմել է 33 418 ՀՀ դրամ կամ 69,5 ԱՄՆ դոլար, ծայրահեղ աղքատության շեմը՝ 23 313 ՀՀ դրամ, կամ 48,5 ԱՄՆ դոլար:

[1] ՀԱՅԱՍՏԱՆ՝ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ 2008-2016՝ https://www.armstat.am/file/article/poverty_2017_english_2.pdf
[2] http://arka.am/en/news/society/29_4_poverty_rate_in_armenia_in_2016_/

Կառուցվածքային խնդիրների հաղթահարումն էլ ավելի է դժվարեցնում աղքատության նվազեցումը: Ավելին՝ Հայաստանում ձմեռները երկար են և սաստիկ, ընդ որում ջերմաստիճանն իջնում է մինչև -30°C: Շինությունների մեծ մասը զուրկ են կենտրոնացված ջեռուցումից և հաճախ ընտանիքների համար դժվար է իրենց երեխաներին ապահովել անհրաժեշտ տաք հագուստով:

Մեկ այլ հիմնախնդիր է որակյան առողջապահական ծառայությունների հասանելիությունը, հատկապես՝ երեխաների և մայրերի համար: Սեփական համայնքներում աշխատատեղերի պակասը շատերին դրդում է աշխատանք փնտրել երկրի սահմաններից դուրս, իսկ գյուղական համայնքների հուսահատ երիտասարդությունը ավելի լավ կյանք խոստացող՝ թրաֆիքինգով զբաղվողների զոհ է դառնում: Առավել խոցելի են այն երիտասարդները, որ խնամակալ հաստատություններից են դուրս գալիս՝ չափահաս տարիքի հասնելով: Թեպետ կրթությունն ավելի ներառականացվում է Հայաստանում, հազարավոր երեխաներ դեռևս շարունակում եմ զուրկ մնալ իրենց հասակակիցների կողմից օգտագործվող հնարավորություններից:

Երեխաները շարունակաբար աղքատության առավել բարձր ռիսկի են ենթարկվում, քան որևէ այլ տարիքային խումբ: Մանկահասակ աղքատությունն ատավել վտանգավոր է, հատկապես քանի որ այն վնասում է երեխային ոչ միայն տվյալ ժամանակահատվածում (Բրուքս-Գան և Դունկան, 1997), այլ նաև հաճախակի երկարաժամկետ հետևանքների է բերում (Գրեգ և Մաչին, 2001; Կորակ 2006; Էսպինգ-Անդերսեն և Մայլս 2009): Մանկահասակ աղքատության մակարդակի մշտադիտարկումը և պատճառների վերլուծությունն առավել կարևոր է երեխաների կենսամակարդակը բարելավող արդյունավետ ռազմավարության մշակման և իրականացման համար: Ավելին՝ ճանաչվել է, որ աղքատությունն ինքնին բազմակողմանի երևույթ է, որ ներառում է ոչ միայն եկամուտ կամ ապրանքների և ծառայությունների սպառում.

> *"Աղքատության մեջ ապրող երեխաները զուրկ են սննդից, ջրից և սանիտարական պայմաններից, հիմնարար առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորությունից, կացարանից, կրթությունից, մասնակցությունից և պաշտպանությունից, և թեպետ ապրանքների և ծառայությունների չափազանց սակավությունը վնասում է յուրաքանչյուր մարդուն, այն առավել վտանգավոր է երեխաների համար՝ դատապարտելով նրանց իրավազրկության, սեփական ներուժն ամբողջապես չիրացնելու և հասարակության կյանքում որպես լիիրավ անդամ չմասնակցելուն:"* (ՄԱԿ, 2007)

Վորլդ Վիժն-ի Ավարտական Մոտեցումը Հայաստանում

Ավելի քան մեկ միլիարդ մարդ ապրում է օրեկան 1,25 ԱՄՆ դոլարի հաշվին, որոնցից 54000-ը կազմում էին 2016-ին Հայաստանում բնակվող ծայրահեղ աղքատները (բնակչության 6,1%-ը): Այդ ընտանիքներից շատերը վարում են անկայուն և խոցելի կյանք՝ գումար վաստակելով պատահական գյուղատնտեսական կամ կենցաղային աշխատանքների միջոցով: Նրանց եկամուտը սովորաբար անկայուն է և սեզոնային, ինչը պարզապես սովի սպառնալիք է ստեղծում այդ աշխատողների և իրենց ընտանիքների համար: Չափազանց և ծայրահեղ աղքատների համար ծանր ֆիզիկական աշխատանքի միակ իրատեսական

այլընտրանքը ինքնազբաղվածությունն է, սակայն շատերը չունեն համապատասխան գիտելիքներ, հմտություններ և նախնական գումար՝ սեփական գործը սկսելու համար:

Վորլդ Վիժնի համար երեխաներն առաջնային են: Այդ սկզբունքով առաջնորդվելով՝ Վորլդ Վիժն Հայաստանը ձգտում է հզորացնել երեխաներին, ընտանիքներին, համայնքներին և գործընկերներին, որպեսզի հնարավոր լինի կանխել և պայքարել երեխաներին առնչվող շահագործման, անտեսման, բռնության և ճնշման այլ տեսակների դեմ՝ հատուկ ուշադրություն դարձնելով առավել խոցելիներին:

Չնայած այն փաստին, որ Հայաստանում վերջերս ջանքեր են գործադրվում երեխաների պաշտպանության օրենքների համակարգման ուղղությամբ, ինչպես նաև գործում են երեխաների իրավունքների մշտադիտարկմամբ և պաշտպանությամբ զբաղվող տարբեր պետական մարմիններ՝ երեխաների պաշտպանության ոլորտի հիմնական խնդիրները շարունակում են առնչվել երեխաների անտեսման, նրանց նկատմամբ բռնության և ճնշումների այլ տեսակների հետ: Ամենակարևոր խնդիրներից են ֆիզիկական և հոգեբանական բռնության ենթարկվող երեխաների, աղքատացած ընտանիքներից պետական խնամակալության ծառայություններին անցած երեխաների բազմաթիվ դեպքեր, ինչպես նաև վերահսկողության և մշտադիտարկման ռեսուրսների բացակայությունն ու անբավարարությունը:[3]

Անցյալ տարիների ընթացքում բազմաթիվ ծրագրեր աղքատ ընտանիքներին տրամադրում էին նյութական աջակցություն, վարկ, կամ ուսուցում՝ տվյալ խոչընդոտները հաղթահարելու նպատակով, սակայն նման միջոցներով չհաջողվեց ընտանիքի եկամուտը հասցնել միջին մակարդակի: Այնուամենայնիվ, վերջին տարիներին մի շարք միջազգային և տեղական ՀԿ-ներ նորացրել են իրենց աջակցությունը ավելի ապահով կենսամակարդակի կառուցմանը նպաստող ծրագրերին: Համակցելով կոմպլիմենտար մոտեցումները՝ արտադրական ակտիվների փոխանցում, վերապատրաստում, սպառողական աջակցություն և ուսուցում՝ մեկ բազմակողմանի ծրագիրը կարող է նպաստել ինքնազբաղվածության կայուն անցմանը:

Ավարտական Մոտեցումը մեկ պրագմատիկ մոտեցում է (այլ մոտեցումների շրջանակում), որի նպատակն է օգնել ծայրահեղ աղքատներին անցնել դեպի կայուն ապրելակերպ ինքնազբաղվածության միջոցով, որը միակ իրատեսական տարբերակ է՝ հաշվի առնելով կայուն աշխատավարձով աշխատատեղերի պակասը: Տվյալ մոդելն ուղղված է խոցելի, տնտեսապես մերժված և սննդամթերքի երկարաժամկետ պակաս ունեցող ընտանիքներին: Ադապտացնելով ԲՌԱԿ ՀԿ-ի կողմից 2002 թ-ին Բանգլադեշում մշակված մեթոդը՝ Ավարտական Մոտեցումը միավորում է սոցիալական պաշտպանության, կենսամակարդակի զարգացման և ֆինանսավորման հասանելիության էլեմենտները՝ ապահովելով մասնակիցների պաշտպանությունը կարճաժամկետ հատվածում և նպաստելով կայուն ապրելակերպի կառուցմանն ապագայում: Նման համակցությամբ այդ աջակցության միջոցները դինամիկ կերպով միաձուլվում են և ավելի օգտակար են որպես մեկ ամբողջական մոտեցում, այլ ոչ թե պարզապես առանձին մասերի հանրագումար: Մոտեցումը կառուցվում է հինգ հիմնարար բաղադրիչներից՝ սպառողական աջակցություն,

[3] Վորլդ Վիժն Հայաստանի Երեխաների Պաշտպանության Ծրագիր՝ https://www.wvi.org/armenia/child-protection

խնայողություններ, ակտիվների/ռեսուրսների փոխանցում, տեխնիկական հմտությունների գծով վերապատրաստում և առօրյա կենսական հմտությունների ուսուցում: Եվ նույնիսկ եթե սա ամենակարող միջոց չէ, նման մոտեցումը ձգտում է կրճատել անհավասարությունը՝ առավել խոցելի ընտանիքներին տեղափոխելով դեպի կայուն կենսակերպ և տնտեսական ամուր հիմունքներ:

Գրաֆիկ 1 – Անցում դեպի կայուն կենսակերպ



- *Սպառողական աջակցություն.* ծրագրի շրջանակներում որպես մասնակից ընտրվելուց հետո ընտանիքները սկսում են ստանալ սպառողական աջակցություն՝ փոքր գումարային նպաստ կամ սննդամթերք: Այս աջակցությունն իրենց «շնչելու» հնարավորություն է տալիս՝ թեթևացնելով առօրյա կենսապայքարի ճնշումը: Այն կարող է տրամադրվել արդեն իսկ առկա պետական աջակցության ծրագրի կամ այլ, արդեն իսկ գործող ծրագրի շրջանակներում: Հայաստանում սոցիալական նպաստների համակարգը գործում է որպես սպառողական աջակցություն, և այն ընտանիքները, որ ներգրավված չեն այդ համակարգում, պետք է ընդգրկվեն և սկսեն ստանալ դրամական նպաստ՝ սննդամթերքի հետ կապված իրենց տարբերական կարիքները բավարարելու համար: Այս բաղադրիչն արտահայտում է սոցիալական պաշտպանության ոլորտի կարևոր եզրահանգումները:
- *Շուկայական վերլուծություն և ակտիվների/ռեսուրսների փոխանցում.* ծրագրի մեկնարկից մի քանի ամիս անց յուրաքանչյուր մասնակից ընտանիքը ստանում է ռեսուրս (օր.՝ կենդանիներ անասնապահության համար, կամ ապրանքներ՝ մանրածախ առևտրի համար), ինչը կօգնի նրանց սկսել մեկ կամ մի քանի տնտեսական գործունեություն: Մինչ այդ փոխանցումը ծրագրի աշխատակիցները խորապես վերլուծություն են կատարում տեղական շուկաների կառուցվածքներում

և աջակցության ծրագրերում, որպեսզի հայտնաբերեն կայուն կենսակերպի առավել իրատեսական տարբերակները: Տվյալ տարբերակները հայտնաբերելուց հետո մասնակիցը կարող է ընտրել ակտիվների «մենյույից»՝ առաջնորդվելով կենսական նախասիրություններով, սեփական հմտություններով և անցյալի փորձով:

- *Խնայողություններ.* երբ մարդկանց հանապազօրյա հացի խնդրի լուծումը կայունանում է, նրանց մոտ խրախուսվում է խնայողություններ սկսելու ձգտումը՝ ոչ-ֆորմալ, կամ էլ ավելի ֆորմալ՝ ֆինանսական ծառայություն մատուցողի մոտ հաշիվ բացելու միջոցով: Ռեսուրսների կուտակման հետ մեկտեղ պարբերաբար խնայողություն կուտակելը մասնակիցների մոտ ամրապնդում է ֆինանսական դիսցիպլինան և ծանոթացնում է նրանց առկա ֆինանսական ծառայություններին: ՎՎ Հայաստանն ականատես է տեղերում ֆինանսական ուսուցման կարիքին, երբ մասնակիցներին անհրաժեշտ է սովորել կանխիկի և ֆինանսական կառավարման մասին, խնայողությունների և փոխառությունների պայմանների մասին: Այս բաղադրիչի հիմքում ընկած է խնայողություններ կատարելու կարևորության մասին եզրակացությունը, որը ծագում է ֆինանսական ներառման ոլորտից:
- *Տեխնիկական հմտությունների վերապատրաստում.* մասնակիցներին տրամադրվում է տեխնիկական ուսուցում՝ ստացած ակտիվների մասին հոգալու նպատակով: Նույնիսկ պարզունակ վերապատրաստումը կարևոր է փոքր բիզնեսի հաջողության համար: Ուսուցումը նույնպես պարունակում է խորհրդատվություն, թե ուր կարելի է դիմել աջակցություն և ծառայություններ ստանալու համար (օր.՝ անասնաբույժի ծառայություններ անասնաբուծությամբ զբաղվող մասնակիցների համար): Ակտիվների փոխանցման և տեխնիկական վերապատրաստման բաղադրիչը հիմնված է կենսակերպի բարելավման ոլորտի եզրակացությունների վրա:
- *Կենսական հմտությունների ուսուցում.* ծայրահեղ աղքատները սովորաբար չունեն բավարար սոցիալական կապիտալ և սեփական ուժերի նկատմամբ վստահություն: Ընտանիքներին ժամանակ-առ-ժամանակ այցելելը ծրագրի աշխատակիցներին թույլ է տալիս ոչ միայն մշտադիտարկում կատարել, այլ նաև 18-25 ամսվա ընթացքում ուսուցում՝ «քոչինգ» իրականացնել: Այդ հանդիպումների ընթացքում աշխատակիցներն օգնում են մասնակիցներին բիզնես պլանավորման և դրամական միջոցների կառավարման հարցերում, սոցիալական աջակցության և առողջապահության և հիվանդությունների կանխարգելման ծառայությունների հարցերում: Որոշ դեպքերում չափազանց արժեավոր է կապ ստեղծել առողջապահության, կրթության և սպառման շուկաների միջև:

Ավարտական Մոտեցումը միավորում է սոցիալական պաշտպանության, կենսակերպի բարելավման և ֆինանսական ներառման ամենանշանակալի բաղադրիչները՝ համակցելով անհապաղ կարիքների հոգալու աջակցությունը և երկարաժամկետ մարդկային կապիտալի և ակտիվների ներդրումները: Նպատակը հետևյալն է՝ պաշտպանել մասնակիցներին կարճաժամկետ հատվածում՝ նպաստելով ապագայում կայուն կենսակերպի կառուցմանը: Այս մոտեցումը բնութագրվում է եռակողմ տեսլականով:

Առաջինը՝ ծրագրի մասնակիցներիին ուղղված սկզբնական արժեքավոր ներդրումը կօգնի ծայրահեղ աղքատ ընտանիքներին կառուցել կայուն ապրելակերպ:

Երկրորդը՝ ակտիվներ կառուցելուն և եկամուտ ստեղծելուն զուգահեռ տվյալ ընտանիքների խոցելիությունը ցնցումների հանդեպ կնվազի, ինչպես նաև ժամանակի ընթացքում զուգահեռաբար կաճի իրենց դիմադրողականությունը: Դա իր հերթին կնվազեցնի կրկին ծայրահեղ աղքատության ճիրաններում այդ ընտանիքների հայտնվելու ռիսկերը: Սակայն մենք հասկանում ենք, որ այս գործընթացը համահարթ չի անցնելու և ընտանիքները հավասարաչափ հաջողություններ չեն ունենալու: Չափազանց աղքատ ընտանիքները մեծաքանակ հարվածների են ենթարկվում և տվյալ հարվածներից յուրաքանչյուրը կարող է հետ մղել նրանց առաջընթացը: Ոչ բոլոր ընտանիքների առաջընթացը կատարվելու է նույն արագությամբ, որոշ ընտանիքներին դա ընդհանրապես չի հաջողվելու: Այնուամենայնիվ մենք հավատում ենք, որ ընտանիքների մեծամասնության համար տվյալ ծրագրի ազդեցությունը ժամանակի ընթացքում կաջակցի նրանց անցնել ծայրահեղ աղքատությունից դեպի կայունություն և դիմադրել ապագա ցնցումներին:

Երրորդը՝ երկարաժամկետ արդյունքները նպաստավոր կլինեն ոչ միայն ուղղակիորեն մասնակցող անհատների և ընտանիքների համար, այլև կնպաստեն անհավասարության կրճատման և խորը, բազմասերունդ աղքատության վերացման սոցիալական նպատակի իրականացմանը:

Այսպիսով՝ «ավարտելը» վերաբերվում է այն ընտանիքներին, որոնք անցում են կատարում դեպի տնտեսապես կայուն ապրելակերպ, ինչն ավելացնում է իրենց եկամուտը, ամբողջ տարվա ընթացքում նպաստում է պարենային ապահովությանը, թույլ է տալիս օգտվել ֆինանսական ծառայություններից, կրթական և առողջապահական հիմնարկություններից և ընդհանուր առմամբ դուրս է բերում նրանց ծայրահեղ աղքատության շրջանակներից: Անշուշտ՝ «ավարտելու» այս ցուցանիշները համապատասխանեցվում են և կոնկրետացվում են ըստ ծայրահեղ աղքատությունն առաջացնող և պահպանող տարածաշրջանային տարբերությունների և սպեցիֆիկ պայմանների:

Ավարտելը նաև կապված է նպաստավոր պայմանների ստեղծման հետ՝ սեփական ուժերի հանդեպ վստահություն, գիտելիքներ, հմտություններ և կապ հասարակության ու այլ ծառայությունների հետ՝ ինչը թույլ է տալիս ապահովել շարունակական, կայուն վերելք: Հարակից հիմնախնդիրները ներառում են թերսնուցում, առողջական խնդիրներ, երեխաների կրթություն, աշխատանքի ավելի լայն հնարավորություն և կանանց հիմնախնդիրներ: Լուծումներ գտնելու համար, անշուշտ, առավել աղքատ ընտանիքները պետք է «կապվեն» սոցիալական պաշտպանության այլ էլեմենտների հետ, ինչպիսիք են առողջապահական, կրթական, կամ ապահովագրական կառույցները:

Այս մոդելն ուղղակիորեն նպաստում է SDG նշանակետերին՝ 1 (աղքատության վերացում), 2 (քաղցի վերացում) և 8 (պատշաճ աշխատանք և տնտեսական աճ): Այս մոդելը նաև ուղղակիորեն նպաստում է SDG նշանակետ 3-ին՝ (առողջ ապրելակերպ և բարեկեցություն) և 4-ին՝ (որակյալ կրթություն): Տվյալ մոդելը սնուցող առաջնակի ոլորտն է ապրելակերպը, այնուամենայնիվ տվյալ մոտեցման ինտեգրացված բնույթի շնորհիվ առողջապահությունը, կրթությունը և երեխաների պաշտպանությունը նույնպես ներգրավված են տվյալ մոդելում:

Ծայրահեղ աղքատությանն առնչվող երեխաների պաշտպանության վերհանված դեպքերին արդյունավետ և կայուն արձագանք տալու նպատակով 2016 թ. վերջում Ավարտական Մոդելը մշակվել և ինտեգրացվել է ՎՎ Հայաստանի կողմից իրականացվող

սոցիալական ծառայությունների առկա փաթեթում: Ծրագրի շրջանակների 2017-2018 փուլում 90 առավել խոցելի ընտանիքներ (ընդհանուր առմամբ 480 շահառու) ՎՎ Հայաստան համայնքներից աջակցություն են ստացել ավելի քան 12 ամսվա ընթացքում՝ իրենց կենսական դիմադրողականությունը բարելավելու և իրենց 261 երեխաների կենսական պայմանները լավացնելու նպատակով, որպեսզի վերջիններս կարողանան լիովին իրացնել իրենց ներուժը:

Աղյուսակ 1. Ծրագրում ուղղակիորեն ներգրավված շահառուներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆ	ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԹԻՎԸ	ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԹԻՎԸ	ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹԻՎԸ
Արագածոտն	17	100	55
Գեղարքունիք	30	142	81
Լոռի	4	30	15
Շիրակ	9	50	24
Սյունիք	4	28	20
Տավուշ	17	91	49
Երևան	9	39	17
ԸՆԴԱՄԵՆԸ	**90**	**480**	**261**

Ներգրավված երեխաների մեծ մասը ներկայացնում էին հետևյալ խոցելի խմբերը.

Խոցելի խմբերի ցանկ
Ցածր եկամուտ ունեցող կամ աղքատության շեմից ցած ապրող ընանիքների երեխաներ
Հաշմանդամություն կամ տարբեր հիվանդություններ ունեցող երեխաներ
Դպրոցից «դուրս մնացած» երեխաներ
Ժամանակավոր կամ մշտապես մեկ ծնողի խնամքի տակ գտնվող երեխաներ
Անտեսված և ճնշումների/բռնության ենթարկված երեխաներ

Հիմնական արդյունքներ

ՎՎ Ավարտական Մոտեցման 2016-2018 փուլում մասնակցող ընտանիքների համար մեկ ընտանիքի հաշվով ամենամսյա եկամուտն աճել էր 55%-ով, ամենամսյա ծախսերն աճել էին 34%-ով, և մասնակցող ընտանիքների 48%-ի ամենամսյա եկամուտը ավարտելու պահին հասել կամ անցել էր ազգային ծայրահեղ աղքատության շեմը (24 269 դրամ մեկ ընտանիքի հաշվով 2017[4]): Ի լրացումն՝ մասնակիցների 58%-ը վստահեցնում էին, որ իրենց զգայական/էմոցիոնալ ինքնազգացողությունը նույնպես բարելավվել է:

Ծախսային արդյունավետություն (Ներդրումներ)

Ավարտական Մոտեցումը միավորում է բազմաթիվ ինտենսիվ միաջամտություններ: Քանի որ միայն փոքրատիվ կազմակերպություններ ունեն համապատասխան փորձ կամ ֆինանսական ռեսուրսներ Ավարտական Մոտեցման բոլոր բաղադրիչները արդյունավետ կերպով առաջարկելու համար, համապատասխան գործընկերների հայտնաբերումը

[4] ՀԱՅԱՍՏԱՆ՝ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ 2008-2017 - https://www.armstat.am/file/article/poverty_2018_english_2.pdf

պլանավորման գործընթացի չափազանց կարևոր քայլ էր: 2016-2018 փուլի ընթացքում ՎՎ Հայաստան Ավարտական Ծրագրի գործընկերներն էին.

- ՀՀ Կառավարությունը՝ տարբեր պետական ծրագրերով հանդերձ
- Հայաստանի SOS Մանկական Գյուղերը
- Հայ Առաքելական Եկեղեցին
- Հայաստանի Պետական Սոցիալական Ծառայությունը
- Տեղական իշխանություններ
- Անհատ բարերարներ

Ինչպես երևում է ստորև աղյուսակից՝ ծրագրի ամբողջ ժամանակահատվածում ընդհանուր ներդրումները կազմել են 44 435 137 դրամ ($92 573), որից 36 962 137 դրամը ($77 004) հանդիսացել է ՎՎ Հայաստանի ներդրումը:

Համաձայն կատարված հաշվարկների՝ վերոնշյալ ներդրումների հետադարձը միջին 15 ամսվա ընթացքում կազմել է 47 130 743 դրամ ($98 189), ինչը գործակցի տեսքով կազմում է 106%: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր ներդրած 1 դրամի հաշվով 15 ամսվա ընթացքում վերադարձել է 1,06 դրամ: Լավագույն փաստն այն է, որ եկամուտները շարունակելու են գոյանալ ծրագրի իրականացումից հետո՝ այսպիսով ավելացնելով ներդրումների հետադարձը:

Նկար 2. Ծրագրի ընդհանուր ներդրումները և նյութական ակտիվների տրամադրումը



Նկար 3-ը պատկերում է, որ միջին մեկ ընտանիքի հաշվով ներդրումը կազմել է 501 933 դրամ ($1 045), որից ՎՎ Հայաստանի մասը եղել է 417 013 դրամ ($869): Մասնակիցներին տրամադրվել են տարբեր տեսակի նյութական ակտիվներ, օրինակ.

- Կենդանաբուծության համար ռեսուրսներ (կով, խոզ, հավ, ոչխար, մեղվընտանիք, և այլն), այդ թվում՝ սկզբնական ամիսների համար անհրաժեշտ կերակրանյութի հետ միասին (գարի, ցորեն, խոտ և այլն)
- Սերմեր՝ բուսաբուծության համար (ոսպ, կարտոֆիլ, ելակի տնկանյութ և այլն)
- Մասնագիտական վերապատրաստում (կարուձև, մազահարդարում, կոսմետոլոգիա, հաշվապահություն, սանտեխնիկական աշխատանքներ,

ավտոմեխանիկա և այլն), ինչպես նաև համապատասխան սարքավորումներ (կարի մեքենաներ, մազահարդարման պարագաներ, մեխանիկական գործիքներ և այլն)
- Արևային պանելներ և ջերմոցներ

Կենսակերպի տարբեր տեսակները, իրենց իսկ անհրաժեշտ գործիքներով հանդերձ, տարբեր եկամտաբերություն են ենթադրում: Օրինակ՝ թռչնաբուծությունը կարող է ստեղծել ցածր, բայց մշտական եկամուտ համեմատաբար կարճ ժամանակահատվածում՝ հավկիթների վաճառքի հաշվին: Իսկ ոչխարաբուծությունը ավելի երկարաժամկետ և եկամտաբեր գործունեություն է: Խելամիտ է մեկ փաթեթում համատեղել նման տեսակի երկու ակտիվներ: Կատարյալ տարբերակում ակտիվների փոխանցումը, որ կապված է խոշոր կենդանիների հետ, ներառում է բեղմնավորված կովեր կամ ոչխարներ, ինչը թույլ է տալիս կրճատել բուծման ժամկետը (դրանով իսկ ավելացնելով ներդրումների հետադարձը):

Փաստերը վկայում են, որ Հայաստանում հաջողված ավարտական աջակցությունը ընտանիքներին հետևյալ օրինակներից է բաղկացած եղել.

- Անասնաբուծություն (կովեր, խոզեր, հավեր, մեղուներ)՝ առաջին ամիսների համար բավարար անասնակերը ներառելով
- Սերմեր՝ բուսաբուծության համար (կարտոֆիլ)
- Մասնագիտական վերապատրաստում (կարուձև, մազահարդարում, կոսմետոլոգիա, հաշվապահություն, սանտեխնիկական աշխատանքներ, ավտոմեխանիկա և այլն), ինչպես նաև համապատասխան սարքավորումներ (կարի մեքենաներ, մազահարդարման պարագաներ, մեխանիկական գործիքներ և այլն):

Անասնաբուծության ոլորտից նշանակելի է ոչխարաբուծության օրինակը: Նման ներդրումը հաջողված է եղել, եթե այն համակցվել է մեկ այլ կարճաժամկետ հետադարձ ապահովող ներդրումով (հավեր, խոզեր, կամ կարտոֆիլ): Այլապես, եթե ոչխարները վարակվել են, ապա ընտանիքի տնտեսական կայունությունն ու եկամուտը զգալիորեն վտանգվել են:

Նկար 3. Ներդրումներ և ակտիվների տրամադրում մեկ ընտանիքի հաշվով



Աղյուսակ 2-ը ցույց է տալիս ծրագրի ամենաբարձր և ամենացածր ներդրումը մեկ ընտանիքի հաշվով: Ամենաբարձր ներդրումը եղել է 6 234 000 դրամ ($12 987) Սյունիքի մարզում, ինչը ներառել է բնակարանի, գույքի (սեղան, աթոռներ, պահարաններ, մահճակալներ և այլն) և տնային պարագաների (սառնարան, լվացքի մեքենա, հեռուստացույց, վառարան և այլն) ձեռքբերում, ինչպես նաև կարտոֆիլի, գարու սերմացուի և տեխնիկայի ձեռքբերում: Դրան հաջորդել է մեկ այլ մեծ ներդրում նույն Սյունիքի մարզում՝ 2 030 000 դրամ ($4 229) արևային պանելների համար: Ամենացածր ներդրումը գրանցվել է Երևանում՝ 40 000 դրամ ($83) ընտանիքի ծնողի մասնագիտական վերապատրաստման (հաշվապահության ուսուցում) համար:

Աղյուսակ 2. Ամենացածր և ամենաբարձր ներդրումները

Ընդամենը ներդրում մեկ ընտանիքի հաշվով, դրամ		ՎՎ Հայաստան ներդրում մեկ ընտանիքի հաշվով, դրամ	
Ամենաբարձր	Ամենացածր	Ամենաբարձր	Ամենացածր
6 234 000	40 000	5 734 000	40 000

Նկար 4-ը ցույց է տալիս միջին ներդրումը, որի արդյունքում ընտանիքը կարողացել է դուրս գալ ծայրահեղ աղքատության շեմից (24 492 դրամ՝ 2017-ին), և ընդհանուր առմամբ այն կազմել է 701 214 դրամ ($1 461):

Նկար 4. Ավարտելու համար ակտիվների տրամադրումը մեկ ընտանիքի հաշվով



Եկամուտների աճ

Ավարտական մոտեցման կիրառման շնորհիվ ծրագրի 2017-2018 փուլի ընթացքում գրանցվել է միջին եկամուտի աճ՝ 55%-ով:

Ինչպես երևում է Աղյուսակ 3-ից և Նկար 5-ից՝ եկամուտի մաքսիմալ աճը՝465,10% գրանցվել է Ճամբարակում, Գեղարքունիքի մարզ, այն ընտանիքում, որը ստացել է խոզեր որպես

ակտիվ, ինչպես նաև ստացել է ընտանեկան սոցիալական նպաստ, իսկ հայրը աշխատանք է սկսել համայնքում: Հաջորդ առավելագույն եկամուտի աճը՝ 373,68% տեղի է ունեցել Բերդ համայնքում, Տավուշի մարզ, ուր ընտանիքը, որի հայրը որպես շինարար աշխատում էր Ռուսաստանում, կնոջ մահանալուց հետո վերադարձել է Հայաստան իր 2 երեխաների հետ, ստացել է շինարարական սարքավորումներ որպես աջակցություն այս ծրագրի շրջանակներում, ինչը նրան թույլ է տվել բարելավելու ընտանիքի տնտեսական պայմանները:

Գրանցվել են նաև եկամուտի նվազման դեպքեր, որոնցից ամենազգալին՝ -31,45%, եղել է Հարթավանում, Արագածոտն մարզ, որտեղ ընտանիքի նախագիծը ձախողվեց: Եկամուտների նվազման դեպքերի մեծ մասը նույնպես գրանցվել է Արագածոտնի մարզում, ինչը կապված է ոչ նպաստավոր հողագործական տարվա հետ:

Ծախսերն ավելացել են 34%-ով, ինչն իր հերթին ցույց է տալիս, որ ընտանիքների շրջանում տարածվում է խնայողությունների ձևավորման մշակույթը:

Աղյուսակ 3. Միջին ընտանիքի եկամուտի-ծախսերի աճ

	ՄԻՋԻՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԵԿԱՄՈՒՏԻ ԱՃ, %	ՄԻՋԻՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԾԱԽՍԵՐԻ ԱՃ, %
ՄԻՋԻՆԸ	55	34
ՄԻՆԻՄԱԼ	-31.45	-100
ՄԱՔՍԻՄԱԼ	465.10	465.10

Նկար 5. Ընտանիքների եկամուտի աճ, %



Միջին ընտանիքի ամենամսյա եկամուտը մինչ ծրագրի մեկնարկը կազմում էր 81 780 դրամ, իսկ միջին ամենամսյա ծախսերը կազմում էին 91 229 դրամ (այս տվյալներից հնարավոր է եզրակացնել, որ ծախսերը եկամուտներին գերազանցելու հետևանքով առաջանում են պարտքեր տեղի խանութներում, վարկեր և այլն)։ Ավարտական մոտեցման կիրառումից հետո միջին ամենամսյա եկամուտը մեկ ընտանիքի հաշվով կազմել է 116 692 դրամ, իսկ ծախսերը՝ 110 704 դրամ, ինչն ապացուցում է այն փաստը, որ ընտանիքներն ավելի գիտակ են դառնում ֆինանսների կառավարման մեջ և ծախսում են ավելի քիչ, քան վաստակում են։

Աղյուսակ 4. Միջին ընտանիքի եկամուտի-ծախսի աճ

	Ընտանիքի ամենամսյա եկամուտը՝ ծրագրից առաջ	Ընտանիքի ամենամսյա ծախսը՝ ծրագրից առաջ	Ընտանիքի ամենամսյա եկամուտը՝ ծրագրից հետո	Ընտանիքի ամենամսյա ծախսը՝ ծրագրից հետո
Միջինը	81 780	91 229	116 692	110 704

Նկար 6-ը ցուցադրում է միջին եկամուտի-ծախսերի աճը՝ դրամական արտահայտությամբ։ Միջին ամենամսյա եկամուտի աճը կազմել է 34 912 դրամ ($72,7), ընդ որում առավել բարձր ցուցանիշը եղել է 142 000 դրամ ($295,8) (վերոնշյալ ընտանիքը Բերդ համայնքում, Տավուշ) և ամենացածրը՝ -28,751 դրամ նվազում ($-59,9) (Հարթավանի ընտանիքի դեպքում, Արագածոտն)։

Մեկ շնչի հաշվով միջին եկամուտը կազմել է 15 887 դրամ՝ մինչև միջամտության/ծրագրի մեկնարկը, և այն աճել է մինչև 23 335 դրամ՝ տվյալ փուլի ավարտին (ինչը գերազանցում է ծայրահեղ աղքատության շեմը 2016-ին, որը եղել է 23 313 դրամ)։ Մեկ շնչի հաշվով ամենացածր եկամուտը մինչ ծրագրի մեկնարկը եղել է 3 000 դրամ, որն աճել է մինչև 5 800 դրամ՝ ծրագրի ավարտին։

Անհրաժեշտ է նշել, որ 90 շահառու ընտանիքներից 10-ը ունեցել են մեկ շնչի հաշվով եկամուտ, որը գերազանցում էր ծայրահեղ աղքատության շեմը (23 313 դրամ՝ 2016-ին), ինչն արդեն իսկ նախապայման էր իրենց հետագա հաջողության և «ծայրահեղ» աղքատությունն ավարտելու համար (Երևանում, Արագածոտնում, Գեղարքունիքում, Շիրակում, Սյունիքում)։ Տվյալ դեպքերից առավել բարձր սկզբնական եկամուտը գրանցվել էր Երևանում, ուր ընտանիքի եկամուտը մեկ շնչի հաշվով կազմել էր 67 400 դրամ (ինչը գերազանցում էր ընդհանուր աղքատության շեմը, որը 40 867 դրամ էր 2016-ին)[5], որին հետևում եր մեկ այլ ընտանիք Երևանում՝ մեկ շնչի հաշվով 47 500 դրամ եկամուտով (ինչը կրկին գերազանցում էր աղքատության շեմը)։

[5] http://arka.am/en/news/society/29_4_poverty_rate_in_armenia_in_2016_/

Նկար 6. Եկամուտ-ծախսեր աճ



Ավարտած ընտանիքներ

Ընտանիքի «ավարտելու» փաստը արձանագրվում էր հետևյալ չափանիշերով.

- Ամենամսյա մեկ շնչի հաշվով եկամուտը գերազանցում է 24 269 դրամը
- Ընտանիքն ապահովված է պարենով/սննդամթերքով
- Առկա են եկամուտի տարբեր աղբյուրներ
- Եկամտաստեղծ ակտիվները մատչելի են
- Ընտանիքն ունի ապագայի տեսլական և նպատակներ
- Առկա են խնայողություններ կամ վարկը մարելու հնարավորություններ
- Երեխաների դաստիարակության դրական, ընտանեկան մթնոլորտ
- Հիգիենա
- Անվտանգ ֆիզիկական միջավայր

Ինչպես երևում է Նկար 7-ից և Աղյուսակ 5-ից, ընտանիքների 48%-ը (43 ընտանիք) հաջողությամբ «ավարտեցին»՝ անցնելով ծայրահեղ աղքատության շեմը: Դրանցից 28-ը բնակվում են գյուղական համայնքներում, իսկ 15-ը՝ քաղաքներում: Այդ 43 ընտանիքներից 10-ի (6 քաղաքային և 4 գյուղական) եկամուտը մինչ ծարգրի մեկնարկը գերազանցում էր ծայրահեղ աղքատության շեմը:

«Ավարտող» ընտանիքների մեծամասնությանը բնորոշ է հետևյալը.

- մեկ շնչի հաշվով եկամուտը գերազանցում է 24 269 դրամը
- ընտանիքն ապահովված է պարենով և սննդամթերքով – նրանք ունենք առնվազն 3 ամենօրյա կերակուրի հնարավորություն, ընդ որում սննդի թե՛ կալորիականությունը, թե՛ բազմազանությունը բավարար են
- նրանք ունեն եկամտաբեր ակտիվներ
- ընտանիքն ունի ապագայի տեսլական և նպատակներ (հիմնականում երեխաների կրթության առաջնայնություն կամ սեփական կացարան/անվտանգ միջավայր)
- ընտանիքում կիրառվում է դրական դաստիարակություն, առկա է լավ ընտանեկան միջավայր, օրինակ՝ միասին նշվող տոներ
- ընտանիքը սկսել է կատարել պատշաճ ծախսումներ, խնայողություններ է կուտակում, կամ ի վիճակի է մարել մինչ ծրագրի մեկնարկը ստացած վարկերը
- ընտանիքի անդամներն ապրում են պատշաճ սանիտարահիգիենիկ պայմաններում

- ֆիզիկական միջավայրը հնարավորինս անվտանգ է, կամ՝ եթե ոչ, ապա ընտանիքը պլանավորում է այն անվտանգ դարձնել:

Միջին հաշվով Հայաստանում ընտանիքը «ավարտում» է միջամտությունից հետո 12 ամսվա ընթացքում:

Նկար 7. 2017-2018 փուլի «Ավարտական» ցուցանիշները



Աղյուսակ 5. Ավարտած և Անավարտ

	Ավարտել են	Չեն ավարտել	Սկզբնական եկամուտը գերազանցել է ծայրահեղ աղքատության շեմը
Գյուղական	28	69	4
Քաղաքային	15	21	6
Ընդամենը	43	47	10

Ծայրահեղ աղքատությունից ընտանիքների դուրս գալուն խոչընդոտող գործոններից էին.

- նյութական ակտիվները ախտավոր էին կամ չափազանց տարեց (ոչխարների դեպքում) և աստիճանաբար ոչնչացան ծրագրի ընթացքում՝ ընտանիքներին զրկելով տնտեսական կայունության հասնելու հնարավորությունից,
- չէր կատարվել ռիսկերի դիվերսիֆիկացում, այսինքն՝ ընտանիքն ուներ կայուն եկամտի միայն մեկ աղբյուր,
- ընտանիքի անդամներն ունեին որոշակի մտավոր խնդիրներ, ինչը թույլ չէր տալիս նրանց ըմբռնել ավելի լավ ապրելու կարիքը,
- ընտանիքը հրաժարվեց անասնաբուծությամբ զբաղվել և վերադարձրեց ստացված կենդանիներին (դրական փոփոխության ձգտումի բացակայություն),
- ընտանիքը վաճառել էր տրամադրված ակտիվները՝ պարտքերը մարելու կամ տան կանխավճառ տալու նպատակով (պատշաճ ուսուցման բացակայություն),
- ընտանիքը լքել էր երկիրը:

Իրավիճակային ուսումնասիրություններ

Իրավիճակային ուսումնասիրության նպատակն ու խնդիրները

Տվյալ ուսումնասիրության նպատակն է հավաքագրել և վերլուծել Ավարտական Մոտեցման կիրառման արդյունավետությունն արտահայտող տվյալները, ինչպես նաև հավաքագրել իրականացման ընթացքում քաղած դասերը՝ հետագա կիրառման համար:

Խնդիրներն էին.

- Նկարագրել ԱՄ-ի ըմբռնումն ու իրականացումը;
- Դիտարկել ԱՄ շնորհիվ տեղի ունեցած փոփոխությունները;
- Նկարագրել իրականացման փուլի հիմնական հաջողություններն ու մարտահրավերները:

Մեթոդոլոգիա

Տվյալ հաշվետվության հիմքում է երեք հիմնական աղբյուրներից ստացված տվյալների վերլուծությունը՝ ԱՄ ծրագրում ներգրավված 12 ընտանիքների իրավիճակային ուսումնասիրության քանակական տվյալները; ԱՄ աշխատակիցների հետ կատարած 7 ֆոկուս խմբերի քննարկումների որակական տվյալները, և ԱՄ ծրագրում ներգրավված բոլոր ընտանիքների համար մեկ շնչի հաշվով տարեկան եկամուտների, ծախսերի հաշվարկները:

Իրավիճակային ուսումնասիրությունների համար ընտրվել են միայն այն ընտանիքները, որոնք ներգրավված չեն եղել ՎՎ այլ միջամտություններում, ուստի հնարավոր կլինի դիտարկել Ավարտական Մոտեցման ազդեցությունը:

Մասնակի կառուցվածքային կրկնակի հարցազրույցներ են կազմակերպվել որպես հիմնական շահառու գրանցված՝ այդ 12 ընտանիքների երեխաների ծնողների/խնամակալների հետ: Հարցազրույցներից մեկը տեղի է ունեցել միջամտության սկզբում՝ որպես հիմնարար սկզբնակետ, իսկ հաջորդ հարցազրույցը տեղի է ունեցել ծրագրի իրականացման 1,5 տարվա ավարտին՝ որպես վերջնական չափագիր: Առաջին հարցազրույցը վարել է սոցաշխատողը, և այդ տվյալները նաև օգտագործվել են ընտանիքի ներառման վերաբերյալ որոշում կայացնելու համար, իսկ երկրորդ հարցազրույցը վարել են մշտադիտարկման և գնահատման բաժնի (DME) աշխատակիցները:

Հարցազրույցի հիմնական թեմաներն են եղել.

- Եկամուտի աղբյուրները;
- Երեխաների հիմնական կարիքները հոգալու ծնողների/խնամակալների կարողությունը;
- Սննդակարգը;
- Ընտանիքի ռեսուրսները/ակտիվները;
- Ապագայի հետ կապված հույսերն ու պլանները;
- Խնայողություններ և պարտքեր;
- Դաստիարակության մեթոդներ:

Ֆոկուս-խմբերի քննարկումներ (ՖԽՔ) են տեղի ունեցել ՏԾ աշխատակիցների այն բոլոր թիմերում, որոնք ներգրավված են եղել ԱՄ իրականացմանը՝ ներառելով ՏՁ համակարգողներին, սոցաշխատողներին և ԵՊ համակարգողներին:

ՖԽՔ թեմաները հետևյալն են եղել.

- Ավարտական Մոտեցման (ԱՄ) նպատակը և ակնկալվող փոփոխությունները՝ որպես ԱՄ իրականացման արդյունք;
- Անհրաժեշտություն և համապատասխանություն;
- Իրականացման քայլեր, այդ թվում՝ աշխատակիցների վերապատրաստում, ԱՄ ընտանիքների ընտրություն, եկամտաբեր գործողությունների ընտրություն, ուսուցման կազմակերպում, նյութական աջակցություն և ակտիվներ, սոցիալական հզորացում և ներառում;
- Ազդեցության արդյունավետությունն ըստ ԱՄ 4 հիմնասյուների՝ սոցիալական պաշտպանություն, կենսամակարդակի բարելավում, ֆինանսական ներառում և սոցիալական հզորացում;
- Իրականացման ընթացքում առաջացած դժվարություններ;
- Հաջորդ փուլի համար առաջարկվող փոփոխություններ:

2017-ին և 2018-ին ԱՄ շրջանակներում բոլոր ներգրավված ընտանիքների և իրենց անդամների տարեկան եկամուտների, ծախսերի և մեկ շնչի հաշվով եկամուտների հաշվարկները ներկայացրել են սոցաշխատողները: Ընդհանուր առմամբ վերլուծության են ենթարկվել 77 ընտանիքների տվյալները:

Տվյալների վերլուծություն. սկզբնակետային և վերջնակետային տվյալները յուրաքանչյուր ընտանիքի համար համեմատության են ենթարկվել՝ տեղի ունեցած փոփոխությունը գնահատելու նպատակով: Քանի որ իրավիճակային ուսումնասիրության դեպքերի թիվը սահմանափակ էր և հնարավորություն չէր տալիս առավել ծավալուն նկարագրական կամ ինֆերենցիալ վերլուծության համար, հաճախականությունները հաշվարկվել են տվյալ 12 դեպքերի/իրավիճակների համար: Բացի այդ, բարեկեցության ցուցանիշը հաշվարկվել էր տվյալ 12 ընտանիքների քանակական տվյալների հիման վրա:
ՖԽՔ որակական տվյալները գրանցվել են հետագա վերլուծության համար; տվյալները թեմատիկորեն տարանջատվել են և վերլուծություն անցել:

Տվյալների որակի ապահովում. դրական կանխակալությունից խուսափելու նպատակով ընտանիքների վերջնակետային տվյալների գրանցումը կատարվել էր ՄԳԲ աշխատակիցների կողմից: Որակական տվյալների համար բոլոր ՖԽՔ-ը ձայնագրվել էին, որից հետո կազմվել էր հնարավորինս բառ-առ-բառ արձանագրություն:

Ավարտական Մոտեցման շնորհիվ տեղի ունեցած փոփոխությունները

Ընտանիքների հիմնախնդիրներից կախված՝ մոտեցման ազդեցությունը տարբեր էր: ԱՄ աշխատակիցները արձանագրել են եկամուտների որոշակի փոփոխություն, սնուցման և կենցաղային պայմանների փոփոխություն, սոցիալական ներառում և այլն:

Սոցիալական պաշտպանություն (երեխայի բարեկեցություն, պարենային ապահովություն, ծառայությունների մատչելիություն, եկամուտներ/ծախսեր)

Ինչպես զեկուցել են աշխատակիցները՝ ԱՄ ընտանիքներում արդեն իսկ դիտարկվող կարևորագույն փոփոխությունը եկամուտի աճն է: Թեպետ այդ աճը չափազանց մեծ չէ, որոշ ընտանիքներ արդեն իսկ կարող են բարելավել իրենց կենցաղային պայմանները, գնել տան համար տարբեր պարագաներ, բարելավել երեխաների սնունդը: Երեխաների հետ հարաբերությունները նույնպես փոխվել են՝ ծնողներն ավելի մեծ ուշադրություն են դարձնում երեխաների անվտանգությանը, առողջ սննդին և առողջապահությանը: Որոշ դեպքերում աղքատության պատճառով դպրոցից դուրս մնացած երեխաները կարողացել են վերադառնալ դպրոց, կանխվել է երեխաների նկատմամբ բռնությունը/ճնշումը, բարելավվել է սոցիալական և առողջապահական ծառայությունների մատչելիությունը:

Ի լրացումն աշխատակիցների կարծիքներին՝ իրավիճակային ուսումնասիրության համար ընտրված 12 ընտանիքների սկզբնական և վերջնական տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ նույնիսկ եթե զգալիորեն չի ավելացել այն ընտանիքների քանակը, որոնք առանց արտաքին աջակցության կարող են ապահովել ստորև թվարկված բոլոր 5 բաղադրիչները, նշանակալի առաջընթաց է գրանցվել այդ բաղադրիչներից մի քանիսի առումով: Այդ առաջընթացը պատկերված է ստորև՝ Աղյուսակ 1-ում, այն նաև ցուցադրում է, թե որքանով են ընտանիքները առաջնություն տալիս իրենց երեխաների կարիքների բավարարմանը:

Աղյուսակ 1. Ընտանիքներ, որ առանց արտաքին աջակցության կարող են ապահովել իրենց բոլոր երեխաների բարեկեցության բաղադրիչները (ուսումնասիրված 12-ից)

Բաղադրիչ	Սկզբնական	Ավարտական
Նոր զգեստներ	2	3
Նոր կոշկեղեն	2	3
Դպրոցական պարագաներ	3	7
Մնունդ՝ օրեկան 3 անգամ	5	8
Ձեռուցում	4	10

Բացի այդ, նկատելի են բարեկեցության որոշակի այլ փոփոխություններ՝ ավելացել է այն ընտանիքների թիվը, ուր բոլոր երեխաներն ունեն զգեստ և կոշկեղեն տարվա բոլոր եղանակների համար, և ուր ընտանիքի բոլոր անդամներն ունեն օրեկան 3 անգամ սնվելու հնարավորություն:

Որոշակի փոքր փոփոխություն է տեղի ունեցել նաև կենցաղային պայմանների՝ կենտրոնացված ջրամատակարարման և ընտանիքի բոլոր անդամների համար մահճակալների առկայության առումով:

Աղյուսակ 2. 12 ընտանիքների բարեկեցության այլ փոփոխություններ

Բաղադրիչ	Սկզբնական	Ավարտական
Բոլոր երեխաներն ունեն զգեստ և կոշկեղեն տարվա բոլոր եղանակների համար	3	8
Ընտանիքի բոլոր անդամներն սնվում են օրեկան 3 անգամ	8	11
Կենտրոնացված ջրամատակարարում	2	5

Մահճակալներ ընտանիքի բոլոր անդամների համար	6	9

Բացի այդ, յուրաքանչյուր ընտանիքի համար հաշվարկվել էր բարեկեցության ինդեքս՝ ինչպես սկզբնական, այնպես էլ վերջնական շրջանում: Ինդեքսի հաշվարկը հիմնված էր մի շարք ցուցանիշների վրա՝ երեխաների հիմնական կարիքները հոգալու ընտանիքի կարողությունը, խմելու ջրի առկայությունը/մատչելիությունը, սնվելու հաճախականությունը, ապագայի հետ կապված հույսերը, պլանների իրականացման վերաբերյալ վստահությունը, տարբեր կենցաղային պարագաների առկայությունը (ջրամատակարարում, տաք ջուր, խոհանոց, մահճակալներ ընտանիքի բոլոր անդամների համար), խնայողություններ կուտակելու և պարտքերը մարելու կարողություն, դաստիարակության մեթոդներ, մասնակցություն համայնքային միջոցառումներին: Ինդեքսի առավելագույն արժեքն է 16, նվազագույնը՝ 0:

Հատկանշական է, որ միջին բարեկեցության ինդեքսը փոխվել էր 3 միավորով՝ սկզբնական և վերջնական ցուցիչների համեմատությամբ (սկզբնականը՝ 6, վերջնականը՝ 9), ինչպես նաև 12 ընտանիքներից 11-ի մոտ բարեկեցության ինդեքսն աճել էր:

Աղյուսակ 3. 12 ընտանիքների բարեկեցության ինդեքսը

ՀՏ	Երեխայի անունը	Սկզբնական	Ավարտական	Տարբերություն
Ճամբարակ	Ամալյա Ս.	2	7.2	5.2
Ճամբարակ	Լուսինե Բ.	5	6.2	1.2
Ճամբարակ	Վիլիելմ Բ.	6	9.8	3.8
Ճամբարակ	Եվա Մ.	5	13	8
Ճամբարակ	Լևոն Դ.	7.6	7.2	-0.4
Իջևան	Ժենյա Ս.	4.2	4.4	0.2
Իջևան	Մաքս Ե.	7.8	9.8	2
Իջևան	Նարե Բ.	6	9.4	3.4
Իջևան	Նարե Մ.	9.6	10.8	1.2
Իջևան	Ռիտա Ա.	7.2	10.4	3.2
Կապան	Սամվել Կ.	6.6	10.4	3.8
Կապան	Անահիտ Պ.	9.6	10.6	1

Բացի այդ 12 ընտանիքների իրավիճակային ուսումնասիրությունից, պահանջվել և վերլուծվել էր 2017 և 2018-ին ԱՄ ծրագրում ընդգրկված բոլոր ընտանիքների (ընդամենը 77 ընտանիք) տարեկան եկամուտների, ծախսերի, մեկ շնչի հաշվով եկամուտների հաշվարկները: Հաշվարկները ցույց տվեցին, որ ընտանիքների 90%-ի մոտ (69 ընտանիք՝ 77-ից) աճել է տարեկան եկամուտը: Աճի միջին չափը[6] կազմել է 316 000 դրամ (նվազագույնը՝ 18 000, առավելագույնը՝ 1 679 000): Ընտանիքների 63,6%-ի մոտ արձանագրվել է տարեկան զուտ եկամուտների աճ[7]:

[6] Մեդիանն ընդունվել է որպես միջին արժեք:
[7] Զուտ եկամուտը տարբերությունն է ընդհանուր եկամուտի և ծախսերի միջև:

Ընտանիքների 80,5%-ի մոտ (62-ը 77-ից) գրանցվել է նաև տարեկան ծախսերի աճ: Միջին աճը[8] կազմել է 223 000 դրամ (նվազագույնը՝ 1 000, առավելագույնը՝ 1 439 000):

Գրաֆիկ 1. Եկամուտների և ծախսերին միջին չափը՝ 2017 և 2018-ին



Առավել կարևորագույն փոփոխություն է համարվում ընտանիքի մեկ անդամի հաշվով եկամուտի աճը, ինչն Ավարտական Մոտեցման հաջողության հիմնական ցուցանիշն է: Այդ 77 ընտանիքներից 90%-ի (69-ը 77-ից) մոտ գրանցվել է ընտանիքի մեկ անդամի հաշվով եկամուտի աճ: Ընտանիքի մեկ անդամի հաշվով եկամուտի աճի միջին չափը կազմում է շուրջ 8 900 դրամ (նվազագույնը՝ 300, առավելագույնը՝ 37 700):

Գրաֆիկ 2. Ընտանիքի մեկ անդամի հաշվով եկամուտի աճի միջին չափը՝ 2017 և 2018



Ապրելակերպի/կենսակերպի բարելավում

Կենսակերպի բարելավման շրջանակներում ընտանիքները ստացել են աջակցություն՝ տեխնիկական ուսուցում և ակտիվներ, ըստ տվյալ ընտանիքի եկամտաստեղծ գործունեության բնույթի: Բացի այդ, իրենց ապրանքներն իրացնելու համար կապ է հաստատվել համապատասխան շուկայի հետ: Քաղաքային համայնքներում ընտանիքները ստացել են աջակցություն՝ աշխատանք փնտրելու գործընթացում:

[8] Մեդիանն ընդունվել է որպես միջին արժեք:

Կախված եկամտաստեղծ գործունեության բնույթից՝ փոփոխությունները նույնպես տարբեր էին: Խոզաբուծության դեպքում փոփոխություններն ավելի ակնհայտ էին, քանի որ հնարավոր էր անմիջապես եկամուտ ստանալ: Այդ ընտանիքները կարող էին ոչ միայն բարելավել իրենց ապրելակերպը, այլ նաև ներդրում կատարել իրենց ֆերմայում: Այլ գյուղատնտեսական գործունեության դեպքերում իրավիճակը տարբերվում էր՝ ընտանիքները պետք է ավելի երկար աշխատեին եկամուտ ստանալու և փոփոխություն զգալու համար:

Ինչպես արդեն նշվել էր, տարբերություններ առկա էին նաև գյուղական և քաղաքային տարածքներում կենսակերպի բարելավման միջև:

Ֆինանսական ներառում

Ինչպես արդեն նշվել էր, ՏԾ-ի մեծ մասում ոչ թե ֆինանսական ուսուցում էր կազմակերպվել, այլ ՏԶ համակարգողները շարունակական խորհրդատվություն էին տրամադրում ֆինանսական կառավարման և խնայողությունների թեմաներով: Միայն մի քանի ՏԾ-ում ֆինանսական գրագիտության մասնագետներ էին աշխատանքի հրավիրվել և կազմակերպվել էին ֆինանսական գրագիտության դասընթացներ:

Ինչպես նշվել էր հաշվետվության մեջ՝ աշխատակիցներն արդեն իսկ նկատել էին խնայողությունների փոփոխություն: Ընտանիքներից շատերը կարողանում էին կուտակել փոքր խնայողություններ կամ գնել կենցաղային պարագաներ՝ խնայողություններ կատարելու արդյունքում:

Այնուամենայնիվ, ֆինանսական գրագիտության ուսուցման կարիքը կա ոչ միայն ընտանիքների, այլ նաև ԱՄ աշխատակիցների շրջանակներում:

Սոցիալական հզորացում

ԱՄ կարևոր բաղադրիչներից մեկը սոցիալական հզորացումն է, որը ներառում է սոցիալական կապերի, վարվելակերպի, հարաբերությունների, մոտիվացիայի բարելավում, ապագայի հույսերի և պլանների կառուցում: Շարունակական սոցիալական աշխատանքի և տվյալ ընտանիքներին ՎՎ իրականացվող տարբեր համայնքային միջոցառումներում (Դրական դաստիարակություն, Տնայցեր, Խաղաղության ճանապարհ, Ընտանիքների տոն և այլն) ներգրավելու շնորհիվ ԱՄ աշխատակիցներն արդեն իսկ արձանագրել են դրական փոփոխություններ: Աշխատակիցների կողմից նշվող հիմնական փոփոխությունը ներառում է համայնքի այլ անդամների հետ շփում, ինչն իր հերթին նպաստում է ավելի արդյունավետ մարքեթինգին և գյուղարտադրանքի վաճառքին, նաև ընտանեկան տոնակատարումներ (հատկապես երեխաների հետ), ինչպես նաև երկարաժամկետ նպատակների կազմում և ապագայի պլանավորում:

Հաջողության պատմություն

N. ընտանիքը

Ծրագրի մեկնարկից առաջ երաժիշտների այդ ընտանիքում 3 երեխա կար, 20-ամյա որդին էլ նոր էր զորացրվել պարտադիր զինծառայությունից: Ընտանիքի հոր՝ նախկին բիզնեսմենի անհաջողություններից և սնանկացումից հետո ընտանիքը Երևանից տեղափոխվել էր շրջաններից մեկը: Ծրագրի մեկնարկի ժամանակ ընտանիքի հայրը հաճախ հարբեցողությամբ էր զբաղվում, աշխատում էր որպես գյուղի նախրապան: 6 անդամից բաղկացած այդ ընտանիքը 3 ամսվա ընթացքում սպառել էր մեկ տոննա կարտոֆիլ, այսինքն նրանց հիմնական սնունդը կարտոֆիլն էր, ցորենն ու մակարոնեղենը: Գյուղի խանութում նրանք կուտակել էին մոտ 250 000 դրամ պարտք: Բացի այդ, նրանք վարկ էին վերցրել 500 000 դրամ, որն այդ պահին արդեն վերածվել էր 1 500 000 դրամի՝ ժամկետանց լինելու պատճառով: Նրանք օրերով հաց չէին ուտում:

ՎՎ Հայաստանի աջակցությունն ընտանիքին՝ Ավարտական Մոտեցման միջոցով

Ընտանիքը որպես աջակցություն ստացավ 820 000 դրամ՝ Ավարտական Մոտեցման շրջանակներում, որից 642 000-ը ՎՎ Հայաստան-ի ներդրումն էր:

- Ընտանիքը ստացավ 2 կով և 10 հավ
- Ընտանիքի մայրը համայնքի երաժշտական դպրոցում ընդունվեց աշխատանքի՝ որպես սոլֆեջոյի ուսուցիչ՝ ՎՎ միջամտության շնորհիվ
- ՎՎ միջամտության արդյունքում մոր աշխատավարձի միայն 20%-ն էր առգրավվում Հարկադիր Ակտերի Կատարման Ծառայության կողմից
- Երեխաները մասնակցեցին ՎՎ կոցմից իրականացվող ամառային ճամբարում՝ իրենց տարիքային խմբերի հետ
- Ընտանիքի սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման համար նրանց տրամադրվեց լվացքի մեքենա և ջրատաքացուցիչ
- Ընտանիքը ստացավ նյութական հանգանակություն (զգեստներ, կոշկեղեն, դպրոցական պարագաներ)
- Ընտանիքը ստացավ կենսական հմտությունների ուսուցում՝ բյուջեի պլանավորման խորհուրդներ, դրական դաստիարակություն և Ընտանիքի տոնակատարում

Ընտանիքի տնտեսական ցուցանիշները

Ծրագրային աջակցության ժամանակահատվածում Ընտանիքն ունեցավ եկամուտի աճ՝ 83,71%-ով (մեկ անդամի հաշվով 14 861 դրամից մինչև վերջնաժամկետում՝ 27 301 դրամ): Նման արդյունքը թույլ տվեց ընտանիքին «ավարտել» և դուրս գալ ծայրահեղ աղքատությունից:

	Տարեկան (2017)	Տարեկան (2018)	Ամսեկան (2017)	Ամսեկան (2018)	Ամսեկան՝ մեկ շնչի հաշվով (2017)	Ամսեկան՝ մեկ շնչի հաշվով (2018)
Եկամուտ	1,070,000	1,965,700	89,167	163,808	14,861	27,301
Ծախսեր	1,228,184	1,965,700	102,349	163,808	17,058	27,301
Խնայողություններ	-158,184	0	-13,182	0	-2,197	0

Ընտանիքի ապագայի տեսլականը

Կաթնամթերքի ամենօրյա օգտագործումը բարելավել էր ընտանիքի անդամների սնունդը, հատկապես երեխաների համար:

Երեխաների կրթությունն ու ապագան դարձել էր ընտանիքի ապագայի տեսլականի առաջնայնություն:

Տան ներսում լոգարան կառուցելու ՎՎ առաջարկից ոգևորված՝ նրանք սկսեցին ամբողջ տան վերանորոգումը՝ ձգտելով կենցաղային պայմանների բարելավմանը:

Նրանք սկսեցին միասին նշել տոները: Ինչպես ասում է ընտանիքի մայրը.

"Վերջին 5 տարվա ընթացքում մենք Ամանոր չենք տոնել: Մենք շուտ էինք լույսն անջատում և պառկում էինք քնելու, որպեսզի երեխաները չհասկանան, որ տոն է, իսկ մենք տոնակատարության գումար չունենք: Բայց ի վերջո մենք ողջունեցինք 2018-ի ժամանումը՝ վառ լույսերով և բարձր տրամադրությամբ: ՎՎ-ը այն հրեշտակների խումբն է, որ մեզ առաջնորդեց և դուրս բերեց խորը անդունդից, մեր մոռացված ընտանիքին պայծառ ապագայի հույս ու հավատ հաղորդեց:"

Եզրակացություններ և առաջարկություններ

Ավարտական մոտեցման ազդեցությունն ուսումնասիրվել է բազմաթիվ հետազոտությունների և գնահատումների միջոցով: Ընդհանուր առմամբ ուսումնասիրությունների եզրակացությունը հետևյալն է՝ ծրագիրը թողնում է լայնածավալ և երկարաժամկետ տնտեսական ազդեցություն: Ներգրավված ընտանիքներն ավելի շատ են սպառում, ավելի շատ ակտիվներ և խնայողություններ են կուտակում: Ծրագրի շրջանակներում աճում է նաև տարրական ձեռներեցությունը, ինչը հնարավորություն է տալիս կարիքավորներին կայուն աշխատել ամբողջ տարվա ընթացքում: Եվ թեպետ հոգեբանական բարեկեցությունը բարելավվեց, այդ ոչ-տնտեսական ազդեցությունը ժամանակի ընթացքում որոշակիորեն մարում է: Սակայն երկարաժամկետ օգուտը մեծապես գերազանցում է սկզբնականում պահանջվող ծախսերին:

Արդյունքները նույնպես վկայում են, որ տրանսֆորմատիվ ազդեցությունը կայուն է, ինչին հնարավոր դարձավ հասնել՝ համատեղելով մեծածավալ ակտիվների տրամադրումը և հմտությունների ուսուցումը; դա թույլ տվեց ծայրահեղ աղքատներին տրամադրել բարձր և կայում եկամտաբերության աղբյուրներ՝ հնարավորություն ստեղծելով ոչ միայն խնայողություններ կուտակել, այլ նաև դիվերսիֆիկացնել իրենց ակտիվները/ռեսուրսները:

Ավարտական մոտեցումն ապացուցել է իր ներուժը՝ այն կարող է ապահովել տնտեսական ներառման հաջողված մոդել և կիրառվել որպես աղքատության նվազեցման տարբեր ազգային ռազմավարությունների բաղադրիչ: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ ազգային համատեքստը կարող է մեծագույն մարտահրավեր հանդիսանալ ավարտական մոտեցման մասսայական կիրառման ճանապարհին, քանի որ թերզարգացած շուկաները սահմանափակում են թե՛ զբաղվածության հնարավորությունները և թե՛ միկրոբիզնեսի ապրանքների նկատմամբ պահանջարկը; բնական և էկոլոգիական աղետները անդառնալիորեն ոչնչացնում են կյանքի սովորական ցիկլը, իսկ առաջարկի խաթարվածությունը բերում է կրթության և առողջապահության ոլորտների սահմանափակումներին՝ զրկելով երեխաներին այդ ծառայություններից; քաղաքական անկայունությունն ու բռնությունն էլ իրենց հերթին կարող են ակնթարթայնորեն չեղարկել զարգացմանն ուղղված ցանկացած միջամտություն:

Կենսակերպի հնարավորությունների սկզբնական ուսումնասիրությունը, որը ներառում է տարբեր ոլորտների շուկաների զննում (օրինակ՝ տեղական շուկաների կենսունակություն, հեռավորություն, մոտակա քաղաք ճանապարհորդելու արժեքն ու ժամանակը, ճանապարհային պայմանները, հասարակական տրանսպորտի առկայությունը), ինչպես նաև այդ հնարավորությունների կայունություն՝ հիմնվելով ծրագրի մասնակիցների հմտությունների և միջավայրային համատեքստի վրա՝ եղանակային պայմաններ, ջրային ռեսուրսներ և կերակրատեսակներ, և այլն. - պետք է կարևորի նաև ներառվող աշխարհագրական տարածաշրջանի առանձնահատկությունները ծրագրի իրականացման համար:

Ծրագիրը պետք է որոշի, թե եկամուտի ինչպիսի մակարդակի է այն ձգտելու հասցնել մասնակիցներին ծրագրի ավարտին և համապատասխանաբար «հետհաշվարկ» կատարի՝ անհրաժեշտ ակտիվների արժեքը գնահատելու համար։

Կենսակերպի յուրաքանչյուր տեսակ տարբերվում է իր դրամական հոսքերով և ռիսկերով։ Կարևոր է մշակել այնպիսի աջակցության փաթեթներ, որոնք համատեղում են կարճաժամկետ և երկարաժամկետ եկամտաբեր ակտիվներ, ինչը հնարավորություն կտա դիվերսիֆիկացնել ռիսկերը։

Ակտիվների փաթեթը տարբեր է՝ ըստ կենսակերպի, ըստ տարածաշրջանի, բայց այն միշտ պետք է դիտարկվի որպես ներդրում։ Ծրագիրը պետք է նաև խուսափի չափազանց փոքրածավալ աջակցությունից՝ ծրագրային ծախսերը կրճատելու հույսերը փափագելուց։

Անչափ կարևոր է լավ հասկանալ շուկան և ընտրել աճի հզոր ներուժ ունեցող ոլորտներ, որոնք զգալի արժեքի ավելացման հնարավորություն ունեն՝ միաժամանակ ներգրավելով ծրագրի մասնակիցներին՝ որպես տվյալ արժեհամակարգի հիմնական դերակատարների։

Կախվածությունից խուսափելու համար չափազանց կարևոր է ի սկզբանե պարզաբանել մասնակիցներին, և շարունակաբար հիշեցնել, թե երբ է սկսվում և երբ է դադարելու սպառողական աջակցությունը։

Ճկունությունն ու ադապտացվելու կարողությունն անչափ կարևոր են։ Համատեքստի յուրահատկությունն է որոշելու, թե ինչպես են ձևավորվելու նյութական աջակցության բոլոր բաղադրիչները, և հաճախակի անհրաժեշտ է լինում ցուցաբերել ճկունություն՝ լավագույն համակցությունը որոշելու համար։

Ընտանիքի յուրահատկությունը նույնպես անհրաժեշտ է հաշվի առնել՝ երբեմն «դանդաղ քայլողները» ավելի շատ ժամանակ ու աջակցություն են պահանջում։ Մինչդեռ այլոք՝ «արագ քայլողները» հավանաբար ավելի քիչ և պակաս ինտենսիվության ներդրում են պահանջում։ Նրանք, հավանաբար, կարող են նաև ավելի կարճ ժամանակահատվածում «ավարտել»։

Դեպի կայուն ապրելակերպ Ավարտական Մոտեցումը աղքատության հաղթահարման ուղիներից միայն մեկն է։ Զբաղվածությունն, օրինակ, մեկ այլ կարևորագույն ուղի է։ Հետևաբար անհրաժեշտ է ակտիվորեն խրախուսել թե՛ մասնավոր, թե՛ պետական ոլորտի աշխատատեղերի ստեղծմանն ուղղված նախաձեռնությունները (ներառյալ աղքատներին ուղղված ֆինանսական քաղաքականությունը)։